# Հայաստանն ու Ռուսաստանը կհամագործակցեն տիեզերական անվտանգության համակարգում



Հայաստանը եւ Ռուսաստանն այսուհետեւ կհամագործակցեն տիեզերական անվտանգության համակարգում: Ինչպես երեկ հրավիրված գիտաժողովի ժամանակ հայտարարեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի տնօրեն **Ռադիկ Մարտիրոսյանը**, համագործակցությունը «Ռոսկոսմոսի», Կելդիշի անվան կիրառական մաթեմատիկայի ինստիտուտի եւ ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի միջեւ է. գերխնդիրն է մոլորակի անվտանգության ապահովումը տիեզերական աղբից: Համագործակցությունը գիտատեխնիկական է:

Ռուսական կողմի համոզմամբ` արդեն իսկ հավաքված է այնքան տեղեկատվություն, որ ժամանակն է սկսել այն կիրառել:

Այս համագործակցությունը, ռուս գիտնականների կարծիքով, կհանգեցնի աստղադիտարանի զարգացմանը, գիտատեխնիկական կադրերով համալրման, պրոֆեսիոնալ կադրերի պատրաստման, երիտասարդ գիտնականների համար լայն հնարավորությունների ընձեռման:

*Արմենպրես*